


ԱՔԷԼ ԱՂԱՆԲԷԿԵԱՆ ԱՅՑԵԼԵՑ ԼՈՆՏՈՆ



Սովետական Միութեան գլխաւոր տնտեսագէտ, իր երկրի ժամանակակից տնտեսական վերափոխումներու կերտիչներէն, Փրոֆ. Աբէլ Աղանբէկեան 1987-ի Նոյեմբերին այցելեց Լոնտոն, գալով Փարիզէն:

Լոնտոնի մէջ, միջազգային համաբաւ վայելող տնտեսագէտը, որպէս պետական գործիչ ու գիտնական, բրիտանացի մտաւորականութեան եւ գիտութեան գործիչներուն առջեւ հանդէս եկաւ դասախօսութիւններով, ունեցաւ գործարար հանդիպումներ համապատասխան մարմիններու հետ:

Օգտուելով Աբէլ Աղանբէկեանի Լոնտոն այցելութենէն, Նոր Սերունդ Մըշակութային Միութեան վարչութիւնը, 27 Նոյեմբեր 1987, երեկոյեան ժամը 6-ին, Զէնգինկթըն Բլոգ պանդոկի սրահներէն մէկուն մէջ կազմակերպեց Բոֆթէյլընդունելութիւն, ի պատիւ հայազգի գիտնականին: Ընդունելութեան ներկայ եղան Լոնտոնի հայ գաղութի տարբեր հոսանքներու ներկայացուցիչները, ազգային դէմքեր, շուրջ հարիւր հոգի:

Ընդունելութիւնը սկսաւ Լոնտոնի Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութեան ատենապետ ընկ. Նորայր Թորիկեանի ելոյթով: Ընկ. Թորիկեան ծանօթացնելէ յետոյ մեծարգոյ հիւրը, անդրադարձաւ իր գլխաւորած միութեան գործունէութեան հիմնական գիծերուն, ապա տուաւ պատմական տեղեկութիւններ Հնչակեան Կուսակցութեան մասին, շեշտը դնելով հայ առաջին փառաքան կուսակցութեան 100-ամեակին վրայ, որպէս կարելոր բրելոյթ:

Ընկ. Նորայր Թորիկեանէն յետոյ, ելոյթ ունեցաւ Փրոֆ. Աբէլ Աղանբէկեան: Փրոֆէսորը ծանօթութիւններ տուաւ Սովետական Միութեան տնտեսական ժամանակակից փառաքանութեան մասին՝ ներքին եւ արտաքին մարզերէն ներս, ապա պատասխանեց բրիտանահայ գործի մարդոց հարցումներուն, որոնք հիմնականին մէջ կը վերաբերէին առեւտուրի ու գործի կարելիութեանց մասին, Խորհրդային Հայաստանին հետ:

Աղանբէկեանի ելոյթին մէջ, շատ կարելոր եւ հետաքրքրական տեղեկութիւններ կային Ղարաբաղի մասին: Հեղինակաւոր անձնաւորութիւնը՝ Ա. Աղանբէկեան յայտնեց, թէ Մոսկուայի մէջ կազմուած է Յանձնաժողով մը, ֆննելու համար Լեռնային Ղարաբաղի ինֆնավար մարզը Խորհրդային Հայաստանին վերամիացնելու հարցը: Յանձնաժողովը, ելլելով տնտեսական մտահոգութիւններէ, նպատակայարմար տեսած է Ղարաբաղը վերամիացընել Խորհրդային Հայաստանին: Յանձնաժողովի եզրակացութիւնը, կրնայ օրէնքի ուժ ստանալ... եզրափակեց ելոյթ ունեցողը: